

10587

336.216

2-11

1929

336.216

Հ-11

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ.

ՀՐԱՀԱՆԳ

1929—30 թ.

ՄՅԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ
ՅԵՆԹԱԿԱ ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԸՆՏՐԵԼՈՒ (ԶՈԿԵԼՈՒ) ՅԵՎ ՑՈՒՑԱԿԱԳՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԻՀ. ՖԻՆԺՈՂԿՈՄՍՏԻ

ՅԵՐԵՎԱՆ—1929

2010

12004

336.216

2-11

91159-204

Հ Ի Ա Հ Ա Ն Գ

1929—30 թվին ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՅԵՆԹԱԿԱ ԿՈՒԼԱԿԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՋՈԿԵԼՈՒ) ՄԱՍԻՆ

1. ԿՈՒԼԱԿԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ.

§ 1. Անհատական կարգով գյուղհարկի յենթադիւնքն համար պետք է հաշվի առնել հետևյալ կարգի տնտեսութիւնները՝

ա) յեթէ տնտեսութեան անդամները զբաղվում են գնումներով՝ ծախելու (վաճառելու) նպատակով.

Ծանոթութիւն.— Գնում է վաճառք ասելով պետք է հասկանալ հետևյալը՝ յեթէ տնտեսութիւնը գյուղում կամ քաղաքում ծախելու համար գնում է դանդաղ գյուղատնտեսական մթերքներ, սրինակ՝ անասուններ, թռչուններ, յուղ, ցորեն և այլն:

բ) յեթէ տնտեսութեան անդամները զբաղվում են առևտրով.

Ծանոթութիւն.— Առևտուր ասելով պետք է հասկանալ հետևյալը՝ յեթէ տնտեսութեան անդամը գյուղում կամ քաղաքում խանութ ունի կամ քաղաքից դնելով արդյունաբերութեան մթերքներ վաճառում է գյուղում կամ փոխանակում է գյուղատնտեսական մթերքների հետ նորից վաճառելու նպատակով:

գ) յեթէ տնտեսութեան անդամները զբաղվում են վաշխառութեամբ.

Ծանոթութիւն.— Վաշխառութիւն ասելով պետք է հասկանալ հետևյալը՝ յեթէ տնտեսութիւնը մեծ տոկոսով դրամ կամ գյուղատնտեսական մթերքներ է տալիս սերիշներին, ինչպես ցորեն, դարբ և այլն:

§ 2. Գնում է վաճառք չի կարող համարվել՝

ա) յեթէ տնտեսութիւնը վաճառում է իր անասունները և նրանց փոխարեն գնում նոր անասուններ՝ հոտը լավացնելու և ավելացնելու նպատակով.

բ) յեթէ տնտեսութիւնը վաճառում է իր գյուղատնտեսական մթերքները:

246

2. 2

15061-57



24068-60

Որինակ. Մի վորեւ տնտեսութեան անդամներից մեկը քաղաքում վաճառել է իր գյուղատնտեսական մթերքները և իր տնտեսութեան կարիքների համար գնել է աղ, նավթ, ճութեղեն և այլն:

4) յեթե տնտեսութեան անդամները պարապում են գյուղատնտեսական մթերքների և անպետք նյութերի (отбросы) գնումներով, հետևյալ պայմաններով՝

1) առանց վարձու աշխատանքի.

2) միայն պետական և կոոպերատիվ հիմնարկությունների համար, նրանց հանձնարարություններ, համաձայն պայմանագրի.

3) վորոշված գներով (по лимитным ценам)

4) կամ փոխանակում է ապրանքով, յեթե վերջինը ստացված է հիմնարկությունից փոխանակություն համար:

§ 3. Անհատական կարգով հարկելու համար պետք է հաշվի առնել նույնպես այն տնտեսությունները, վորոնք ունեն հետևյալ հատկանիշները՝

ա) յեթե տնտեսությունը սխտեմատիկորեն գործադրում է վարձու աշխատանք՝ տանը, գյուղատնտեսություն մեջ կամ արհեստավորական և տնայնագործական ձեռնարկություններում.

Ծանոթութուն. — Սխտեմատիկորեն վարձու աշխատանքով ոգտվող չեն համարվում հետևյալ տնտեսությունները՝

1. յեթե հացահատիկային շրջանում ոգտվում են վոչ ավելի, քան 50 վարձու բանվորական որից.

2. յեթե խաղողա-բամբակագործական շրջաններում ոգտվում են վոչ ավելի, քան 100 վարձու բանվորական որից.

3. յեթե ծխախոտարուծական շրջանում ոգտվում են վոչ ավելի, քան 125 վարձու բանվորական որից.

4. յեթե սեփական աշխատավոր ձեռք չունենալու պատճառով, աշխատեցնում են մեկ մշտական բանվորից վոչ ավելի.

5. յեթե աշխատեցնում են մեկ մշտական վարձու բանվորից վոչ ավելի հիվանդության, Կարմիր Բանակում և Միլիցիայում ծառայելու, կամ սեզոնային վարձու աշխատանքների գնալու հետևանքով և յեթե տնտեսություն մեջ բացի նրանից, ուրիշ աշխատունակ տղամարդ չկա.

6. յեթե աշխատեցնում են մեկ մշտական բանվորից վոչ ավելի հասարակական (ընտրովի կամ նշանակովի) պաշտոններ կատարելու հետևանքով (որինակ՝ գյուղական ուսուցիչ, շրջանային հողաչափ, կոոպերատիվի, գյուղխորհրդի, գավառակային գործկոմի նախագահ), յեթե այդ աշխատանքները պահանջում են տնտեսությունից հեռանալ կամ գյուղատնտեսական աշխատանքներից կտրվել, տնտեսություն տվյալ դրությամբ ամբողջ ժամանակամիջոցում, և յեթե տնտեսություն մեջ բացի տվյալ անդամից, ուրիշ աշխատունակ տղամարդ չկա.

7. յեթե բաղմունքում տնտեսությունների շնչերի թվում միջին չափով աշխատունակ անդամներ չկան և նրանք սեզոնային բանվորներ են վարձում ավելի քան նախատեսված է այս ծանոթության 1, 2, 3 կետերում: (վերջինների վերաբերմամբ հարկահանձնաժողովները կարող են յուրաքանչյուր առանձին դեպքում այդպիսի տնտեսություններին անհատական կարգով հարկել): Բաղմունքում տնտեսությունների աշխատունակ անդամների միջին չափը (նորման) պետք է ընդունել այն, վորը վորոշված է տվյալ գավառակի համար գավառային գործկոմի կողմից.

Ծանոթութուն 1. — Աշխատունակ են համարվում՝ տղամարդիկ 18-ից մինչև 55 տարեկան և կանայք՝ 16-ից մինչև 50 տարեկան հասակը:

Ծանոթութուն 2. — Աշխատունակ չեն համարվում 1, 2, 3, հաջմանդամության խմբերին պատկանող սնտերագմի և աշխատանքի հաջմանդամները. ժամանակավոր անաշխատունակությունը՝ որինակ հիվանդություն և այլն, հաշվի չի առնվում:

8. յեթե տնտեսությունն աշխատեցնում է արհեստի մեջ մեկ մշտական վարձու բանվորից վոչ ավելի՝ նրա առանձնահատուկ պայմաններից ստիպված. որինակ՝ յեթե տնտեսությունն ունի դարբնոց և աշխատեցնում է մեկ մշտական բանվոր:

9. յեթե տնտեսությունն աշխատեցնում է մեկ մշտական վարձու բանվորից վոչ ավելի, երբ նրա միակ աշխատավորը հաջմանդամ է, սովորում կամ ծառայում է:

10. Յեթե աշխատեցնում են մեկ մշտական աշխատանքի հոսողից փոշ ավելի (անասունները պահելու կամ լուծը բռնելու համար) :

բ) յեթե անտեսությունն ունի աղաց, ձիթհան, դինդ, ձափարաղաց, կորեկաղաց, թաղիքագործարան, կտրտոֆիլի, պտուղների կամ բանջարեղենի շորանոց կամ այլ արդյունաբերական ձեռնարկություններ այն դեպքում, յերբ թված ձեռնարկություններն ունեն մեքենայական շարժիչներ (ընդ կամ մեքենաների ուժով աշխատող) կամ կիրառում են վարձու աշխատանք, ինչպես նաև յերկու և ավելի աշխատանքող աղացներ :

Ծանոթություն 1.—Նորմայով աշխատող ողու գործարանները, վորոնց տերերը սպիրտ կամ ողի թորելու և վաճառելու համար մթերքներ են գնում, կարող են հատկանիշ ծառայել անհատական կարգով հարկելու համար :

Ծանոթություն 2.—Յեթե այս կետում հիշված ձեռնարկությունները պատկանում են մի քանի անտեսությունների անհատական կարգով հարկելու համար պետք է հաշվի առնել այն տնտեսությանը, վորին պատկանում է ընդհանուր հաշվով աղացների (ջրաղաց, դինդ, ձիթհան, ձափարաղաց, կորեկաղաց) մի քարից փոշ պակաս կամ մյուս ձեռնարկություններից կես մասից վու պակաս :

գ) յեթե անտեսությունը շարունակ կամ վորոշ ժամանակով (սեզոնով) վարձով և տալիս հատուկ սարքավորված տոանձին շենքեր բնակության կամ օտեւորական ու արդյունաբերական ձեռնարկության համար :

Ծանոթություն.—Յեթե Դիլիջանում, Ղարաբաղի սայում կամ մի ուրիշ վայրում անտեսությունն ամառվա ամիսներին վարձով և տալիս իր բնակարանը՝ ձմեռը նորից այդ շենքում ապրելու համար, անտեսությունը միայն այդ հատկանիշի համար չի կարելի հարկել անհատական կարգով :

դ) յեթե անտեսությունը յեկամուս և ստանում կրոնական պաշտամունքի ծառայությունից :

§ 4. Յորդ §-ում մատնանշված անտեսությունները հաշվի յեն առնվում անհատական կարգով հարկելու համար միայն այն դեպքում, յեթե նրանք ընկնում են տոկոսային հավելման տակ :

Տոկոսային հավելման տակ են ընկնում այն արնտեսությունները, վորոնց ընդհանուր հարկվող յեկամուտը (գյուղատնտեսական և վոշ-գյուղատնտեսական) 500 ուրլուց ավելի յե, 9 և 10 շունչ ունեցող անտեսություններում ամեն շնչին ընկնող յեկամուտը 60 ուրլուց ավելի յե, 11 և 12 շունչ ունեցող անտեսություններում 65 ուրլուց ավելի և և 13 և ավելի շունչ ունեցող անտեսություններում, յեթե 70 ուրլուց ավելի է :

Տոկոսային հավելման տակ չեն ընկնում այն արնտեսությունները, վորոնք ունեն իրրե բանվոր անասուն միայն 2 գոմեշ կամ 2 յեղ կամ 2 ձի կամ դրանցից 2 դուլիս խառն և գյուղատնտեսական գործիքների բացակայության պատճառով անասունների կամ գործիքների վարձում—յեթե նրանց ընդհանուր յեկամուտը 650 ուրլուց ավելի չէ :

§ 5. Առաջին §-ում և Յորդ §-ի «բ» «գ» և «դ» կետերում մատնանշված անտեսությունները յենթակա յեն հարկի անհատական կարգով այն դեպքում, յերբ նրանց վոշ-գյուղատնտեսական (անաշխատ) յեկամուտները 125 ուրլուց պակաս չեն :

§ 6. Այն դեպքերում, յերբ հիշված անտեսությունների վոշ-գյուղատնտեսական յեկամուտները 125 ուրլուց պակաս են, գյուղհաշվառու հանձնաժողովները այդպիսի անտեսություններին, այնուամենայնիվ, պետք է հաշվի առնեն : Սակայն, յեթե գալատալային և դավառային հանձնաժողովները գտնեն, վոր այդ յեկամուտները իսկապես 125 ուրլուց ավելի չեն—ամեն մի սուանձին դեպքում նրանք կարող են հարկել նման անտեսությունները անհատական կարգով, յեթե յեկամուտն անտեսության ընդհանուր ունակությունից՝ անաշխատ յեկամուտների չափից և գյուղատնտեսական յեկամուտների գումարից :

§ 7. Անհատական կարգով չեն կարող հարկվել այն անտեսությունները, վորոնք ունեն վերե հիշված հատկանիշները, բայց գյուղատնտեսությամբ չեն պարապում :

Ծանոթություն.—Գյուղատնտեսությամբ պարապող չեն կարող համարվել :

1) այն տնտեսությունները, վորոնց գյուղատնտեսական, նոր-
մատիվ ձևով հաշված յեկամուտը 30 ուր. ավելի չէ

2) այն տնտեսությունները, վորոնք ունեն 1 դուխ խոզոր
հարկիւղ անասուն և տնտեսության կարիքների համար, բանջարա-
նոց 300 քառ. սաժ. վոչ ավելի:

3) յեթե նման զեպքերում տնտեսությունը վերցնում է կա-
պտիւղ մինչև 1 գեսյատին խոտհարք այդ անասունի կերի համար,
նաե տնտեսության բանվոր և ծառայող անդամներին հատկացրած
պաշտոնական խոտհարքները:

Պաշտոնական խոտհարք ստելով պիտի հատկանալ յերը տնտես-
բանվոր կամ ծառայող անդամը հիմնարկության պատկանող
խոտհարքներից ստանում և վորոչ տարածություն իր կարիքների
համար:

Արիւնակ 1-ին.—Տնտեսությունն ունի վերև հիշված հատկա-
նիշներից վորեւ մեկը և ունի հետեյալ գյուղատնտեսական յեկա-
մաթի սղորդները՝ 1 կով, 3 փեթակ չըջանակաւոր և 1 գես. կա-
պտիւղ վերցրած խոտհարք: Յենթադրենք, սղյալ գյուղի համար
սահմանված է՝ կովի նորման—15 ո., փեթակների նորման—5
ուր.: Այդ տնտեսության յեկամուտը հարկելիս, խոտհարքը չը-
պետք է հաշվել: Կովի և փեթակների ընդհանուր յեկամուտը կլինի
3) ուր.: Այդպիսով սղյալ տնտեսությունը գյուղհարկի յենթա-
կա չէ:

Արիւնակ 2-րդ.—Նման մի ուրիշ տնտեսություն ունի 1 կով,
300 քառ. սաժ. բանջարանոց և 2 վոչխար: Յենթադրենք, վոր
բանջարանոցի նորման սահմանված է 200 ո., վոչխարի նորման—
2 ո. 50 կ., կովի նորման—17 ո.: Այս զեպքում ևս տնտեսու-
թյունը գյուղհարկի յենթակա չէ, վորովհետև կովի և վոչխարի
ընդհանուր յեկամուտը կլինի 22 ուր., իսկ բանջարանոցի յեկա-
մուտը հաշվի չի առնվում:

§ 8. Յեթե տնտեսությունը, 1928 թ. մայիսի 1-ից
սկսած մինչև 1929 թ. մայիսի 1-ն ունեցել է այս հրա-
հանդի 1-ից մինչև 6-րդ պարագրաֆներում մատնա-
նշված հատկանիշները, իսկ հաշվառման ժամանակ այդ
հատկանիշները գոյություն չունեն՝ այդ տնտեսու-
թյունները պետք է հարկվեն անհատական կարգով:

Ծանոթութուն.—Գալառակային և գալառային հարկհանձ-
նաժողովները իրավունք ունեն այդպիսի տնտեսություններին ան-
հատական կարգով չհարկել, նկատի ունենալով թե տնտեսությու-
նը յերբ և զրկ լել այդ հատկանիշներից ի՞նչ պատճառներով և այդ

հատկանիշների բնույթը: Իսկ յեթե նման տնտեսությունները նո-
րից ձեռք կրերեն այդ հատկանիշները, ապա հարկային տարվա
ընթացքում նրանք կարող են յենթարկվել հարկման անհատական
կարգով:

§ 9. Անհատական կարգով հարկման յենթակա
տնտեսությունների քանակը ՀՍԽՀ-ի մեջ չպետք է գե-
րագոնցի գյուղացիական տնտեսությունների ընդհա-
նուր թվի 30%-ից: Միանգամայն արգելվում է ըստ
գյուղերի կամ գալառակների վորոշել նրանց քանակը
և վորեւ սովոր սահմանել:

2. ՆԱԽԱՊԵՍ ԻՆՉ ՉԵՎՈՎ ՊԵՏՔ Ե ԸՆՏՐԵԼ (ՁՈԿԵԼ) ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՏՆՏԵՍՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ:

§ 10. Անհատական կարգով հարկվող տնտեսու-
թյունների ընտրությունը (Ձոկելը) և նախնական ցու-
ցակ կազմելը պետք է կատարեն գյուղհաշվառու հանձ-
նաժողովները մինչև ընդհանուր հաշվառումը: Այս
ընտրությունը պետք է ակտիվ մասնակցեն գյուղի չքա-
վորական ժողովները:

§ 11. Ցուցակը կազմելու ժամանակ պետք է ոչ-
սաղործել անցյալ տարի փաստորեն անհատական կար-
գով հարկված տնտեսությունների ցուցանիշ:

§ 12. Մինչև ցուցակ կազմելը հանձնաժողովը
պարտավոր է կատարել մանրամասն քննություն, վորի
ժամանակ պետք է ներկա լինեն այն հարկառուները,
վորոնց տնտեսությունները յենթակա յեն անհատական
կարգով հարկվան:

Գյուղհաշվահանձնաժողովները, հիմք ընդունելով
այդ տնտեսությունների վերաբերյալ բոլոր նյութերը
և ցուցմունքները, պետք է հայտնաբերեն թե ինչ հատ-
կանիշներ և յեկամուտ է ունեցել նա անցյալ տարի և
ինչ հատկանիշ և յեկամուտ ունի այս տարի և այդ
հատկանիշների և յեկամաթի համաձայն վորոշում են
պետք է յնողնել սղյալ տնտեսությունն այս տարի ևս
անհատական կարգով հարկելու, թե վոչ:

§ 13. Յեթե քննությունից պարզվի, վոր այս կամ
այն տնտեսությունը այս տարի ևս պետք է անհատա-

կան կարգով հարկվի, ապա ցուցակագրում են նրան, իսկ յեթե պարզվի, վոր չպետք է հարկվի՝ չեն ցուցակագրում:

§ 14. Յեթե քննությունից պարզվի, վոր տնտեսությունն անցյալ տարի ունեցել է այնպիսի հատկանիշ, վորն այս տարի հիմք չի ծառայում անհատական կարգով հարկելու համար, և յեթե այս տարի ևս, բացի դրանից, ուրիշ հատկանիշ չունի, ուրեմն նրան չեն ցուցակագրում:

Որինակ՝ յենթադրենք մի տնտեսություն անցյալ տարի հարկվել է անհատական կարգով միայն գյուղատնտեսական մեքենաներ շահագործելու համար: Ասենք թե այս տարի ևս բացի դրանից ուրիշ վոչ մի հատկանիշ չունի: Վորովհետև գյուղատնտեսական մեքենաների շահագործումն, անհատական կարգով հարկելու համար այս տարի հատկանիշ չի ծառայում, այդ տնտեսությունը չպետք է ցուցակագրել:

§ 15. Յեթե քննությունից պարզվի, վոր տնտեսությունն անցյալ տարի ունեցել է այնպիսի հատկանիշ, վորն այս տարի ևս հիմք է ծառայում անհատական կարգով հարկելու համար, բայց վորից նա զրկվել է 1928 թ. մայիսին կամ հունիսին և մինչև հիմա ձեռք չի բերել այդ հատկանիշը ու բացի դրանից, ուրիշ վոչ մի հատկանիշ չունի, ուրեմն այդ տնտեսությունը նույնպես չպետք է ցուցակագրել:

Որինակ՝ յենթադրենք մի տնտեսություն պարապել է անցյալ տարի առևտրով և ուրիշ հատկանիշ չի ունեցել: Այս տարի սկսած 1928 թ. մայիս —, հունիսից մինչև հիմա նա այլևս առևտրով չի պարապում և ուրիշ վոչ մի հատկանիշ չունի, այդ տնտեսությունը ևս չպետք է ցուցակագրել:

§ 16. Յեթե քննությունից պարզվի, վոր արհեստագործական տնտեսությունն ունեցել է անցյալ տարի (սկսած 1927 թ. մայիսի 1-ից, մինչև 1928 թ. մայիսի 1-ը) և ունի այս տարի (սկսած 1928 թ. մայիսի 1-ից մինչև հիմա) այնպիսի հատկանիշ, վորը հիմք է ծառայում անհատական կարգով հարկելու համար, բայց նրա ամբողջ յեկամուտը հաշվելուց հետո (տես 3-րդ գլուխը) պարզվի, վոր տնտեսությունը տոկոսային հավելման տակ չի ընկնում, դրան ևս չպիտի ցուցակագրել:

Որինակ 7 յենթադրենք տնտեսությունն անցյալ տարի ունեցել

է 2 աչքանի ջրաղաց և այս տարի ևս ունի այդ ջրաղացը: Ասենք թե տնտեսության գյուղատնտեսական և վոչ-գյուղատնտեսական հարկով յեկամուտը հավասար է 900 ո. և ունի 15 չունչ: Վորովհետև տնտեսությունը տոկոսային հավելման տակ չի ընկնում, դրան նույնպես չպիտի ցուցակագրել:

Իսկ յեթե այդ տնտեսությունը տոկոսային հավելման տակ ընկներ, որինակ՝ յեթե նրա ամբողջ հարկով յեկամուտը 1200 ո. լիներ, այդ դեպքում պարզ է, վոր նման տնտեսությունը պետք է ցուցակագրվեր անհատական կարգով հարկելու համար:

§ 17. Բոլոր այն տնտեսությունների նկատմամբ, վորոնք անցյալ տարի սխալմամբ կամ հատկանիշ չունենալու պատճառով, անհատական կարգով չեն հարկվել, իսկ այս տարի ունեցած հատկանիշների և յեկամուտի համաձայն պետք է հարկվեն՝ հանձնաժողովը հրավիրում է նման տնտեսությունների ներկայացուցիչներին և քննությունից հետո վորոշում՝ պետք է հարկվեն նրանց անհատական կարգով, թե վոչ:

Որինակ 1-ին.— Յենթադրենք անցյալ տարի մի վորեւ աշխատավորական տնտեսություն վոչ մի հատկանիշ չի ունեցել անհատական կարգով հարկելու համար, իսկ այս տարի (1928 թ. մայիսի 1-ից կամ հետո) նա սկսել է պարապել առևտրով, այդ տնտեսությունն այս տարի պետք է հարկվի անհատական կարգով:

Որինակ 2-րդ.— Յենթադրենք անցյալ տարի մի վորեւ աշխատավորական տնտեսություն վոչ մի հատկանիշ չի ունեցել անհատական կարգով հարկելու համար, իսկ այս տարի ձեռք է բերել 2 աչքանի ջրաղաց, վորից ստացել է, յենթադրենք, 600 ո. մաքուր յեկամուտ: Յենթադրենք, վոր նրա գյուղատնտեսական նորմատիվ ձևով հաշված յեկամուտը հավասար է 400 ո., ունի 10 չունչ: Վորովհետև այդ տնտեսությունն ընկնում է տոկոսային հավելման տակ և միաժամանակ ունի 2 աչքանի ջրաղաց, ուրեմն այդ տնտեսությունը պետք է հարկվի անհատական կարգով:

Որինակ 3-րդ.— Մի տնտեսություն ունեցել է անցյալ տարի կրոնական պաշտամունքի ծառայությունից յեկամուտ, յենթադրենք 300 ո., գյուղատնտեսությունից յեկամուտ 800 ո. և ունեցել է 12 չունչ և սխալմամբ չի հարկվել անհատական կարգով: Այս տարի նա ստացել է գյուղատնտեսությունից յեկամուտ 900 ո., կրոնական պաշտամունքի ծառայությունից 400 ո. և ունի

13 շունչ: Վերոգնատե նա, բայց հատկանիշից, բնկնում է նաև տոկոսային հավելման տակ, ուրեմն պետք է հարկվի անհատական կարգով:

§ 18. Յեթե տնտեսության գլխավորը, կամ անդամներից մեկը, չնայած վոր իր ժամանակ կանչվել է ցուցակագրության, բայց չի ներկայացել, նրա բացակայությունը չպետք է դադարեցնի աշխատանքները: Այդպիսի դեպքերում, հանձնաժողովները բոլոր հաշիվները կատարում են իրենց մոտ յեղած նյութերի՝ հավաստի աղբյուրներից ստացած տեղեկությունների հիման վրա:

§ 19. Գյուղհաշվառու հանձնաժողովը, գյուղի չքավորական ժողովի հետ կազմած և հաստատված ցուցակը պետք է դնի գյուղի ակտիվի ժողովին՝ նորից քննության առնելու համար:

§ 20. Այս ձևով վերջնականապես կազմված ցուցակը, հաշվառման տվյալների և գյուղհաշվահանձնաժողովի կազմած արձանագրությունների հետ միասին, գյուղխորհուրդներն անմիջապես պետք է ուղարկեն գավառային հարկհանձնաժողովին: Միաժամանակ գյուղխորհուրդները պարտավոր են հայտնել հարկատուներին գյուղի հաշվառու հանձնաժողովի վորոշումը՝ նրանց անհատական կարգով հարկելու մասին:

Յեթե վորևէ գյուղացու կողմից բողոք է ներկայացված անհատական հարկման տակ գցելու դեմ, ցուցակին անսլայման պետք է կցվի և ուղարկվի նաև բողոքը:

§ 21. Գավառային հարկհանձնաժողովը պարտավոր է ցուցակները ստանալուց հետո, 5 օրվա ընթացքում քննել բոլոր տնտեսությունները: Քննության ժամանակ պետք է անսլայման լինի այն գյուղի հանձնաժողովի նախագահը, վորի ցուցակը բնկնում է և ինքը հարկատուն:

§ 22. Գավառային հարկհանձնաժողովները պետք է քննեն բոլոր հատկանիշները, թե արդյոք նրանք համապատասխանում են ՀՍԽՀ ժողկոմխորհի վորոշմամբ սահմանված հատկանիշներին թե վոչ: Միաժամանակ նրանք պարտավոր են քննելու և հարկավոր դեպքում ստուգելու գյուղհաշվառու հանձնաժողովի կողմից վոր

գյուղատնտեսական գրադմունքներից վորոշված գումարները: Նմանապես նրանք պարտավոր են նորից հաշվել (ստուգելու համար) նորմատիվ ձևով հաշված գյուղատնտեսական յեկամտի աղբյուրների գումարները:

§ 23. Առանց բնույթյան և ստուգման ցուցակները հատատելը միանգամայն արգելվում է:

§ 24. Քննելուց և ստուգելուց հետո, գավառային հարկային հանձնաժողովը կայացնում է իր վորոշումը և նշանակում արձանագրության մեջ:

§ 25. Յեթե գավառային հարկհանձնաժողովը վորոշում է վորևէ տնտեսություն հանել անհատական կարգով հարկվողների ցուցակից՝ այդ մասին անմիջապես պետք է հայտնի հարկատուին, առանց սպասելու գավառային հարկհանձնաժողովի վորոշման:

§ 26. Գավառային հարկհանձնաժողովն իր վորոշումն ամբողջ նյութի հետ միասին պետք է ուղարկի, հենց նույն օրը, ուղարկի գավառային հարկհանձնաժողովին:

§ 27. Գավառային հարկհանձնաժողովը 7 օրվա ընթացքում պարտավոր է իր հերթին քննել և ստուգել գավառային հարկհանձնաժողովի վորոշումը, համեմատելով այդ գյուղհաշվառու հանձնաժողովի վորոշման հետ:

§ 28. Յեթե գավառային հարկհանձնաժողովը վորոշում է գավառային հարկհանձնաժողովի վորոշումը (վորևէ տնտեսություն ազատում է անհատական կարգով հարկվելուց, կամ հարկում է անհատական կարգով վորևէ տնտեսություն, վորն ազատել է գավառային հարկհանձնաժողովը), նման դեպքերում գավառային հարկհանձնաժողովը պարտավոր է հայտնել այդ մասին հարկատուին՝ գավառային հարկհանձնաժողովի միջոցով:

3. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՎՈՐՈՇԵԼ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎ ՅԵՎ ՎՈՉ-ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՎԱՄՈՒՏԸ:

§ 29. Գյուղհաշվառու, գավառային և գավառային հարկհանձնաժողովները անհատական կարգով հարկվող տնտեսությունների նորմատիվ և վոչ-գյուղա-

տնտեսական յեկամուտները պետք է վորոշեն հետևյալ ձևով՝

ա) ցուցակագրության ժամանակ պետք է հաշվի առնեն տնտեսության բոլոր գյուղատնտեսական յեկամարտի աղբյուրները: Դրա համար սահմանված է հատուկ արձանագրության ձև (№ «Ա»): Այդ արձանագրությունը պետք է լրացնել հետևյալ ձևով՝

1) 1-ին մասում պետք է գրել այն գավառակի, գավառի և գյուղի անունը, վորտեղ կազմվում է արձանագրությունը, հարկատուի ազգանունը, անուն, հայրանունը, բնակության վայրը:

2) 2-րդ մասում պետք է հաշվի առնել տնտեսության գյուղատնտեսական բոլոր յեկամարտի աղբյուրները:

Գյուղատնտեսական յեկամարտի աղբյուրներից պետք է հաշվի առնել հետևյալը:

ա) փաստացի ցանած ամբողջ հողի տարածությունը:

բ) բոլոր տեսակի խոտհարքների տարածությունը:

գ) բանջարանոցների, պարտեզների, խաղողի և պտղատու այգիների, չալթուկի, բամբակի, կարտոֆիլի, ծխախոտի և մյուս բոլոր մշակույթների տարածությունը:

դ) փեթակների քանակը (չըջանակավոր և կթոցածեպ)՝

յե) ձիերը, ջորիները, ուղտերը, յեղները, գոմեշները և եղերը 4 տարեկանից բարձր:

զ) ցուլերը յերեք տարեկանից բարձր:

ե) կովերը և մատակներն առաջին ծնից հետո և յեղինջները 3 տ. բարձր:

ը) խոզերը վեց ամսականից բարձր:

թ) ձմեռն անցկացրած վոշխարները և այծերը:

Մանրություն.— Անասունների տարիքը վորոշվում է առ 1-ը մայիսի 1929 թ.:

3) Հաշվի առած գյուղատնտեսական յեկամարտի աղբյուրների թիվը պետք է բազմապատկել այդ գյուղի և այդ յեկամարտի աղբյուրի համար սահմանված նորմայով: Բոլոր աղբյուրներից այդ ձևով հաշված յեկամուտները պետք է գումարել և ստանալ տնտեսության ամբողջ նորմատիվ յեկամուտը:

Մանրություն.— «ա» և «բ» կետերում մատնանշված տարածությունների յեկամուտները հաշվելիս պետք է կիրառել 3-րդ հոդ. «ա» և «բ» կետերով սահմանված արտոնությունները:

4) Արձանագրության 3-րդ մասում պետք է գրել տնտեսության կողմից, 1928 թ. մայիսի 1-ից մինչև 1929 թ. մայիսի 1-ը, վարձած մշտական բանվորների թիվը:

5) Արձանագրության 4-րդ մասում պետք է գրել տնտեսության կողմից, 1928 թ. մայիսի 1-ից մինչև 1929 թ. մայիսի 1-ը վարձած սեզոնային բանվորների թիվը:

6) Վոշ-գյուղատնտեսական զբաղմունքներից ստացած յեկամարտի գումարը հաշվելու և վորոշելու համար, պետք է լրացնել արձանագրության հինգերորդ մասը հետևյալ ձևով՝

ա) 1-ին սյունյակում պետք է գրել վոշ-գյուղատնտեսական զբաղմունքի մանրամասն անվանումը:

բ) 2-րդ սյունյակում՝ ընդհանուր յեկամարտի գումարը, առանց դուրս գալու ծախսերը (ВОЛОВОЙ ДОХОД):

Մանրություն.— Ընդհանուր յեկամուտ անելով պետք է հասկանալ տնտեսության վոշ-գյուղատնտեսական զբաղմունքներից ստացած ամբողջ յեկամուտը, այն է՝ իր արտադրած ուղբանքների ամբողջ արժեքը, ուրիշի ապրանքները կամ նյութերը վերամշակելու համար ստացած ամբողջ վարձատրությունը, ապրանքափոխադրումից ստացած ամբողջ յեկամուտը, շենքերի և գյուղատնտեսական մեքենաները վարձով տալուց ստացած ամբողջ յեկամուտը և այլն, առանց դուրս գալու վորևէ ծախս:

գ) 3-րդ սյունյակում պետք է գրել ձեռնարկության մեջ աշխատող ընտանիքի անդամների թիվը:

դ) 4-րդ սյունյակում պետք է գրել ձեռնարկության մեջ աշխատող վարձու բանվորների թիվը:

ե) 5-րդ սյունյակում պետք է գրել ձեռնարկության վարձու բանվորներին վճարած աշխատավարձի գումարը, ամբողջ հարկային տարվա ընթացքում:

զ) 6-րդ սյունյակում պետք է գրել մյուս արտագրական ծախսերի գումարը:

Մանրություն 1.— Մյուս արտադրական ծախսերի թվում պետք է հաշվել բոլոր տեսակի զբաղմունքներին վերաբերող արտադրողական ծախսերը, այն է՝ 1) հում նյութի, վառելանյութի

և կիսաֆարերկատի արժեքը, 2) հատուկ վարձով վերցրած արտադրողական մեքենաների և շենքերի վարձը, 3) հատուկ շենքերի և մեքենաների ընթացիկ վերանորոգման ծախսերը, 4) վոչ-գյուղատնտեսական զբաղմունքներում աշխատող բանվոր անասունների վարձը ու կերակրելու ծախսերը և այլն:

Ծանոթություն 2.—Աշխատավարձից և զրաի վարձու աշխատանքից ստացած յեկամտից վոչ մի ծախս չպետք է դուրս գալ:

ը) 7-րդ սյունյակում պետք է գրել ծախսերի ընդհանուր գումարը, այն է՝ ձեռնարկության բանվորներին վճարած աշխատավարձի և մյուս արտադրողական ծախսերի ընդհանուր գումարը:

թ) 8-րդ սյունյակում պետք է գրել բոլոր ծախսերը դուրս գալուց հետո մնացած յեկամուտը:

Ծանոթություն.—Վոչ գյուղատնտեսական յեկամուտները վորոշելու համար պետք է հիմք ընդունել այն յեկամուտը, վորը ստացել է տնտեսությունը, սկսած 1928 թ. մայիսի 1-ից մինչև 1929 թ. մայիսի 1-ը:

ժ) 9-րդ սյունյակում պետք է գրել այն տոկոսը, վորը սահմանված է վոչ-գյուղատնտեսական զբաղմունքներից ստացած յեկամուտները հարկելու համար (§ 29):

ի) 10-րդ սյունյակում պետք է գրել նորմատիվ ձևով հաշված վոչ-գյուղատնտեսական յեկամտի հարկի տակ ընկնող գումարը:

լ) 11-րդ սյունյակում պետք է գրել անհատական կարգով հարկվող վոչ-գյուղատնտեսական յեկամուտների գումարը, այն է՝ աշխատավարձի 10 կամ 15⁰/₀-ը, մյուս զբաղմունքների գուտ յեկամտի (ընդհանուր յեկամտից դուրս յեկած ծախսը) 100⁰/₀-ը:

7) Արձանագրության 6-րդ մասի 10-րդ սյունյակում պետք է գրել գյուղատնտեսության յեկամուտի նորմատիվ հաշված ընդհանուր գումարը, իսկ 11-րդ սյունյակում անհատական կարգով վորոշված գյուղատնտեսական յեկամուտի ընդհանուր գումարը:

8) Արձանագրության 7-րդ մասի 10-րդ սյունյակում պետք է գրել նորմաներով հաշված ամբողջ յեկամտի գումարը (գյուղատնտեսական և վոչ-գյուղատնտեսական), իսկ 11-րդ սյունյակում՝ անհատական կար-

գով վորոշված ամբողջ յեկամտի գումարը (գյուղատնտեսական և վոչ-գյուղատնտեսական):

Ծանոթություն.—Անհատական կարգով գյուղատնտեսական և վոչ գյուղատնտեսական յեկամուտները (սյունյակ 11) վորոշվում են հետագայում, ընդհանուր հաշվառման ժամանակ, գավ-հարկի անձնագրովների կողմից հաստատվելուց հետո:

9) Արձանագրության 8-րդ մասում պետք է գրել տնտեսության շնչերի թիվը:

10) Արձանագրության 9-րդ մասի 10-րդ սյունյակում պետք է գրել նորմատիվ ձևով հաշված հարկի գումարը, իսկ 11-րդ սյունյակում անհատական կարգով հաշված հարկի գումարը:

Ծանոթություն.—Նորմատիվ և անհատական կարգով հարկի գումարը վորոշվում է հետագայում Գավֆինբաժնում:

11) Արձանագրության 10-րդ մասում պետք է գրել այն հատկանիշները, վորի համար տնտեսությունը պետք է յենթարկել հարկման անհատական կարգով:

12) Արձանագրության 11-րդ մասում պետք է գրել տնտեսության բողոքի համառոտ բովանդակությունը կամ ստորագրելուց հրաժարվելու պատճառը:

13) Արձանագրության 12-րդ մասում պետք է գրել չբավորական կամ գյուղի ակտիվի ժողովի յեղբակացությունը՝ անհատական կարգով հարկելու և հարկատուի բողոքի մասին:

14) Արձանագրության 13-րդ մասում պետք է գրել գավառակային հարկհանձնաժողովի վորոշումը:

15) Արձանագրության 14-րդ մասում պետք է գրել գավառային հարկհանձնաժողովի վորոշումը:

16) Արձանագրության 15-րդ մասում պետք է գրել ստուգում կատարողների յեղբակացությունը:

բ) Անհատական կարգով հարկվող տնտեսությունների ընդհանուր յեկամուտը վորոշելիս, չպետք է ալիքացնել:

1) Այն աշխատավարձը, վորը ՀՍՈՀ Ժողկոմխորհի վորոշման 8-րդ հոդվածի համաձայն ազատվում է գյուղհարկից: (Որինակ՝ ուսուցիչների, բժիշկների, գյուղահարկից, պարհակի կարգով կատարած աշխատանքի, բատրակի կատարած աշխատանքի և այլն):

2) Բոլոր պարզ (հառաքակ) գյուղատնտեսական մեքենաներից, սերմագտիչներից, տեսակավորիչներից և այլն ստացած յեկամուտները:

3) Այն յեկամուտները, վորոնք յենթակա յեն յեկամատահարկի, անկախ նրանից՝ հարկված են նրանք յեկամատահարկով թե վոչ, (ապրանքային աղտոցներից, 3 և ավելի աչքանի բոլոր ջրաղացներից, առևտրից և այլն):

Ծանոթութուն.—«բ» կետի 1-ին և 2-րդ մասերում հիշված յեկամուտները պետք է հաշվի առնել, բայց տնտեսության ընդհանուր հարկվող յեկամտին չպետք է ավելացնել: 3-րդ մասում հիշված ձեռնարկությունների յեկամուտները չպետք է հաշվել, այլ պետք է գրել միայն նրանց անվանումը:

գ) Անհատական կարգով հարկվող տնտեսությունները վոչ-գյուղատնտեսական յեկամուտները վորոշելու համար, պետք է հաշվի առնել և հարկել տնտեսության ստացած բոլոր յեկամուտները (բացի այս §-ի «բ» կետով նախատեսված յեկամուտներից), անկախ նրանից յենթակա յեն նրանք գյուղահարկի թե վոչ և հարկված են նրանք արհեստագործական հարկով թե վոչ:

Որինակ՝ մի տնտեսություն, բացի գյուղատնտեսական յեկամուտներից—ունի նաև խանութ, վորը հարկված է արհեստագործական հարկով և վորից նա ստացել է 200 ո. յեկամուտ: Բացի դրանից, նա պարտավոր է շերամապահությամբ, վորից ստացել և 300 ո. յեկամուտ: Վորովհետև տնտեսության վոչ-գյուղատնտեսական յեկամուտներն ընդամենը կաղմում են 500 ո., իսկ յեկամատահարկի չհարկվող միևնույն գյուղական վաշրերում սահմանված է 500 ո., ուստի այդ յեկամուտը յեկամատահարկի յենթակա չէ: Անհատական կարգով հարկվող տնտեսություններում այդ յեկամուտը պետք է հարկվի գյուղատնտեսական հարկով, չնայած նրան, վոր առհասարակ շերամապահությունը գյուղահարկի յենթակա չէ և չնայած նրան, վոր այդ խանութը հարկված է արհեստագործական հարկով: Իսկ յեթե այդ վոչ-գյուղատնտեսական ամբողջ յեկամուտը լիներ վոչ թե 500 ո., այլ, յենթադրեմք, 900 ո. կամ 1.000 ո., այդ ժամանակ արդեն, դա իբրև յեկամատահարկի յենթակա յեկամուտ չի կարող հարկվել գյուղահարկով—նույնիսկ անհատական կարգով հարկվող տնտեսություններում:

դ) Վոչ-գյուղատնտեսական գրադմունքներից այդ ձևով վորոշված յեկամուտը պետք է ավելացնել տնտե-

սության գյուղատնտեսությունից նորմաներով հաշված յեկամտի վրա հետևյալ չափերով՝

1) Աշխատավարձի և գրսի վարձու աշխատանքից ստացված յեկամտի գումարից 15⁰/₀ այն դեպքում, յերբ այդ յեկամուտը ստացվում է տնտեսության մեջ և 10⁰/₀ այն դեպքում, յերբ այդ յեկամուտը ստացվում է տրնտեսությունից դուրս:

Ծանոթութուն.—Յերբ տնտեսության անդամը ծառայում է կամ աշխատում է վարձով ուրիշ վայրում, բայց չարախական մեկ կամ մի քանի անգամ գալիս է տուն, նման դեպքերում ևս քետք է հարկել աշխատավարձի 15⁰/₀-ը:

2) Վոչ-աշխատավորական զուտ յեկամուտը (ընդհանուր յեկամտից դուրս յեկամ ծախսը) ամբողջովին, այսինքն՝ 100⁰/₀-ով:

3) Մեքենայական շարժիչներով աշխատող գյուղատնտեսական բարդ գործիքներից ստացվող յեկամուտը—25⁰/₀-ով, այլ տեսակի գյուղատնտեսական բարդ գործիքներից ստացվող զուտ յեկամուտը 10⁰/₀-ով:

4) Դրսի գրադմունքների ընթացքում վոչ-վարձու աշխատանքներից ստացվող զուտ յեկամուտները—25⁰/₀-ով:

5) Տնայնագործական, արհեստագործական և այլ զուտ յեկամուտները ավելացվում են՝ յեթե վարձու բանվոր չունի—35⁰/₀-ով, յեթե ունի մեկ վարձու բանվոր—40⁰/₀-ով, յեթե ունի 2 վարձու բանվոր—45⁰/₀-ով, յեթե ունի 3 վարձու բանվոր—50⁰/₀-ով:

29-րդ §-ում մատնանշված ձևով յեկամուտները պետք է հաշվել նրա համար, վոր հնարավոր լինի վորոշել՝ ընկնում են նրանք տոկոսային հալեյման տակ, թե՞ վոչ, (այսինքն պետք է հարկել նրանց անհատական կարգով թե վոչ):

Ծանոթութուն.—Վերջինս չի վերաբերվում առաջին §-ում մատնանշված տնտեսություններին, վորոնց նորմատիվ յեկամուտը չափով վորոշել և վորոնք պիտի հարկվեն անհատական կարգով, անկախ նրանից՝ ընկնում են տոկոսային հալեյման տակ, թե՞ վոչ:

4. 1929-30 ԹՎԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԿԻ 36-ՐԴ ՀՈԴ. «ա» և «բ» ԿԵՏԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ ԶՐԿՎՈՂ ԱԿՆՀԱՅՏ

ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆՏՐԵԼՈՒ
(Չոկելու) ՅԵՎ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՀԱՇՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

1) Ակնհայտ կուլակային տնտեսությունների կառուցանիշները.

§ 30. ՀՍԽՀ Ժողկոմխորհի վորոշման 36-րդ հոդ. «ա» և «բ» կետերով սահմանված արտոնություններից զրկելու համար պետք է հաշվի առնել՝

ա) այն տնտեսությունները, վորոնք ՀՍԽՀ Ժողկոմխորհի վորոշման 26 և 27-րդ հոդ. համաձայն 1929-30 հարկային տարում պետք է հարկվեն անհատական կարգով.

բ) այն տնտեսությունները, վորոնք սխտեմատիկաբար վարձով են տալիս բարդ գյուղատնտեսական գործիքներ՝ մեքենայական շարժիչներով, անկախ նրանից՝ անհատական կարգով պետք է հարկվեն, թե վոչ.

գ) այն տնտեսությունները, վորոնք ունեն աղաց, ձիթհան, դինգ, ձալարաղաց, կորեկաղաց, թաղիքաղործարան, կարտոֆելի, պտուղների, բանջարեղենի, բոժոժի կամ ծխախոտի չորանոց, կտտարեկաղործված ուղու գործարաններ կամ ալ արդյունաբերական ձեռնարկություն այն դեպքում, յերբ թված ձեռնարկություններն ունեն մեքենայական շարժիչներ (Չրի և մեքենաների ուժով աշխատող) կամ կիրառում են վարձու աշխատանք, անկախ նրանից, անհատական կարգով պետք է հարկվեն թե վոչ:

Ծանոթություն.— Նորմայով աշխատող ողու գործարանները, վորոնց տերերը սպիրտ կամ ողի թորելու և վաճառելու համար մթերքներ են դնում, կարող են տնտեսությունը 36-րդ հոդ. «ա» և «բ» կետերով սահմանված արտոնություններից զրկելու հատկանիշ ծառայել:

դ) այն տնտեսությունները, վորոնք ունեն յերկու կամ ավելի աչքանի բոլոր տեսակի աղացներ—ջրաղաց, մոտորաղաց, դինգ, ձալարաղաց, կորեկաղաց, անկախ նրանից՝ կիրառում են վարձու աշխատանք, թե վոչ և անհատական կարգով պետք է հարկվեն թե վոչ:

Ծանոթություն.— Այն դեպքում, յեթե յերկու կամ ավելի աչքանի աղացները, դինգերը, ձալարաղացները կամ կորեկաղացները պատկանում են յերկու կամ ավելի տնտեսությունների, 36-րդ հոդ. «ա» և «բ» կետերով սահմանված արտոնություններից զրկվում են այն տնտեսությունները, վորոնց պատկանում է ընդհանուր հաշվով մեկ քարի $\frac{3}{4}$ մասից ավելին: Այն դեպքերում, յերբ «գ» կետում հիշված մյուս ձեռնարկությունները պատկանում են մի քանի տնտեսությունների, նույն արտոնություններից զրկվում են այն տնտեսությունները, վորոնց պատկանում է ընդհանուր հաշվով ձեռնարկության կեսը կամ ավելին:

ե) այն տնտեսությունները, վորոնք կապալով վերցնում են աշխատավորական նորմայից ավելի վարելահող կամ արդյունաբերական այգիներ ու բանջարանոցներ, և յեթե այդ տնտեսությունները սխտեմատիկաբար կիրառում են վարձու աշխատանք, անկախ նրանից՝ անհատական կարգով պետք է հարկվեն թե վոչ:

Ծանոթություն.— Կապալով վերցված վարելահողի, այգիների և բանջարանոցների աշխատավորական նորման (չափ) վորոշելու իրավունքը վերապահված է գավգործկոմներին:

զ) այն տնտեսությունները, վորոնք սխտեմատիկաբար վարձու աշխատանք են կիրառում գյուղատնտեսության կամ անալնագործական արհեստների մեջ, անկախ նրանից՝ անհատական կարգով պետք է հարկվեն թե վոչ:

Ծանոթություն.— Սխտեմատիկաբար վարձու աշխատանք կիրառող տնտեսություններ չեն կարող համարվել՝ 1) յեթե տնտեսությունը հացահատիկային շրջանում ոգտվում է վոչ ավելի քան 50 վարձու բանվորական ուրից, 2) յեթե տնտեսությունը խաղողաբամբակագործական շրջաններում ոգտվում է վոչ ավելի, քան 100 վարձու բանվորական ուրից, 3) յեթե տնտեսությունը ձիախոտարածական շրջանում ոգտվում է վոչ ավելի քան 125 վարձու բանվորական ուրից, 4) յեթե տնտեսությունը սևիական աշխատավորական ձեռք չունենալու ոգտված ոգտվում է մեկից վոչ ավելի մշտական բանվորից, 5) յեթե ոգտվ, ոգտվում է մեկից վոչ ավելի մշտական վարձու բանվորից տնտեսությունը մեկից վոչ ավելի մշտական վարձու բանվորից ոգտվում է ստանձնահատուկ պայմաններում, ինչպես արևմտի հիվանդության կամ կարմիր բանակը ծառայության կանչվելու պատճառով, միայնիսլամ ծառայելու, կամ աշխատավորական սեյնային աշխատանքների դնալու և հասարակական (ընտրովի

կամ նշանակողի) պաշտոններ կատարելու հետևանքով (որինակ՝ գյուղական ուսուցիչ, շրջանային հողաչափ, կոոպերատիվի, գյուղխորհրդի, գավառակային գործկոմի նախագահ) և այլն, յեթե այդ աշխատանքները պահանջում են տնտեսութունից հեռանալ կամ չլուրջանտեսական աշխատանքներից կտրվել տնտեսութան տվյալ դրության ամբողջ ժամանակամիջոցում, և յեթե տնտեսութան մեջ, բացի տվյալ անդամից, ուրիշ աշխատունակ աղամարդ չկա:

բ) Այս հոդվածի «բ», «գ», «դ», «ե» և «զ» կետերում հիշատակված տնտեսութունները գրկվում են 36-րդ հոդվածի «ա» և «բ» կետերով սահմանված արտոնութուններից միայն այն դեպքում, յեթե տնտեսութան հարկվող ամբողջ յեկամուտը (գյուղատնտեսական և վոչ-գյուղատնտեսական) 400 ռուբլուց կամ 7 և ավելի շունչ ունեցող տնտեսութան ամեն մի շնչին ընկնող յեկամուտը 60 ռուբլուց պակաս չէ:

§ 31. Այդ հատկանիշների համաձայն, գյուղհաշվառու հանձնաժողովները ճիշտ նույն կարգով, վորը սահմանված է անհատական կարգով հարկվող տնտեսութունները ընտրելու (ջոկելու) և ցուցակը կազմելու համար-ընտրում (ջոկում) և կազմում են ցուցակ ակնհայտ կուլակային տնտեսութունների, վորոնք գրկվում են ՀՍՍՀ ժողկոմխորհի վորոշման 36-րդ հոդ. «ա» և «բ» կետերով նախատեսված արտոնութուններից:

§ 32. Այդ տնտեսութունների յեկամուտները պետք է վորոշել ճիշտ այն կարգով, վորը նախատեսված է անհատական կարգով հարկվող տնտեսութունների յեկամուտները վորոշելու համար:

§ 33. Կուլակային տնտեսութունների ցուցակը կազմելու և բոլոր տեղեկութունները գրելու համար սահմանված է ցուցակ № Բ, վորտեղ պետք է նշանակել տեղեկութուններ՝

1) այն տնտեսութունների մասին, վորոնք յենթակա յեն հարկման անհատական կարգով և

2) այն տնտեսութունների մասին, վորոնք պետք է գրկվեն 36-րդ հոդ. «ա» և «բ» կետերով սահմանված արտոնութուններից:

§ 34. Ակնհայտ կուլակային տնտեսութունների համար տոանձին արձանագրութուն (ձե № Ա) չպետք է

կազմել: Դրանց մասին բոլոր տեղեկութունները պետք է նշանակել միայն ձե № Բ ցուցակի մեջ: Իսկ անհատական կարգով հարկվող տնտեսութունների համար բացի արձանագրութունից (ձե № Ա) բոլոր տեղեկութունները պետք է նշանակել նաև ձե № Բ ցուցակի մեջ:

§ 35. Այդ ձեով կազմած ցուցակը բոլոր նյութերի հետ միասին անմիջապես պետք է ուղարկել գավառակային հարկհանձնաժողովներին:

§ 36. Գավառակային և գավառային հարկհանձնաժողովները վարվում են այդ ցուցակի հետ նույնպես, ինչպես նախատեսված է անհատական կարգով հարկվող տնտեսութունների համար:

§ 37. Գավառային և գավառակային գործկոմների ու գյուղխորհուրդների հատուկ ուշադրութունը հրավիրել այն խնդրի վրա, վոր վոչ մի միջակ աշխատավորական տնտեսութուն չընկնի անհատական կարգով կարկվող և ակնհայտ կուլակային տնտեսութունների շարքը և չգրկվի այն արտոնութուններից, վորը տրվում է միջակ աշխատավոր գյուղացիութանը:

§ 38. Նույն որդանների ուշադրութունն է հրավիրվում նաև այն խնդրի վրա, վոր վոչ մի դեպքում չկրկնվեն այն սխալներն ու աղավաղումները, վորոնք տեղի ունեցան անցյալ 1928-29 հարկային տարում, անհատական հարկման և վոչ-գյուղատնտեսական յեկամուտների վորոշման ասպարիզում:



ՀԱՅՊՈՒԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ

ՊԱՏՎԵՐ № 3344

ԳՐԱՌԵՊՐԱԿԱՐ 2106 Բ.

ՏԻՐԱԺ 1500

2013

ՀՀ Ազգային գրադարան

2889



NL0045114

